2009 թվականի հունվար -մայիս ամիսների ՀՀ պետական բյուջեի կատարման ամփոփ բնութագիրը

2009 թվականի հունվար-մայիս ամիսներին ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են ավելի քան 244.7 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 279.2 մլրդ դրամ, որոնք ապահովել են ՀՀ կառավարության կողմից ճշտված կիսամյակային ծրագրի համապատասխանաբար 75 եւ 73.8 տոկոսը: Պետական բյուջեի տարեկան ծրագրային ցուցանիշները կատարվել են եկամուտների գծով՝ 27.3%-ով, ծախսերի գծով՝ 31.3%-ով:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի եկամուտները նվազել են 13.3%-ով կամ 37.5 մլրդ դրամով: Այն պայմանավորված է հարկերի ու տուրքերի նվազմամբ, որը կազմել է 19.2% կամ 45 մլրդ դրամ: Նույն ժամանակահատվածում պարտադիր սոցիալական ապահովության վճարները եւ այլ եկամուտներն աճել են համապատասխանաբար 1.1 մլրդ դրամով (3%-ով) եւ 3.9 մլրդ դրամով (38.1%-ով): Պաշտոնական դրամաշնորհները կազմել են շուրջ 2.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 142.5 մլն դրամի դիմաց:

Պետական բյուջեի եկամուտների 77.4%-ը ձեւավորվել է հարկերի եւ տուրքերի, 15.8%-ը՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարների, 5.8%-ը՝ այլ եկամուտների եւ 1.1%-ը՝ պաշտոնական դրամաշնորհների հաշվին: «Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 18-րդ կետին համապատասխան պետական բյուջեում ներառվել են նաեւ պետական հիմնարկների արտաբյուջետային ֆոնդերի միջոցները, որոնց եկամուտները հաշվետու ժամանակահատվածում կազմել են 6.7 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 6 մլրդ դրամի դիմաց:

2009 թվականի հունվար-մայիս ամիսներին պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 189.3 մլրդ դրամի հարկեր ու տուրքեր՝ 73.4%-ով կատարելով կիսամյակային ճշտված ծրագիրը եւ 25.9%-ով՝ տարեկան ծրագիրը:

Հարկերի ու տուրքերի 44.1%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին: Այն կազմել է ավելի քան 83.4 մլրդ դրամ եւ 28.3%-ով կամ 32.9 մլրդ դրամով զիջել նախորդ տարվա նույն ցուցանիշը: ԱԱՀ-ի մուտքերից շուրջ 56.7 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, շուրջ 26.8 մլրդ դրամը՝ ապրանքների եւ ծառայությունների ներքին շրջանառությունից: Ընդ որում, նվազել են եւ՛ ներմուծումից, եւ՛ ներքին շրջանառությունից ստացվող գումարները:

Պետական բյուջեի հարկերի ու տուրքերի 8.3%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով շուրջ 15.8 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծված ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է ավելի քան 10.5 մլրդ դրամ, որից

շուրջ 4.9 մլրդ դրամը՝ բենզինի եւ դիզելային վառելիքի, 4.2 մլրդ դրամը՝ ծխախոտի ներմուծման հարկումից: Հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից պետական բյուջեի մուտքերը կազմել են շուրջ 5.3 մլրդ դրամ, որից 2.9 մլրդ դրամը ստացվել է ներքին արտադրության ծխախոտի իրացումից: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ակցիզային հարկը նվազել է 4.1%-ով կամ 1 մլրդ դրամով: Ընդ որում, նվազել են միայն հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացված գումարները:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի հարկերի ու տուրքերի 20.3%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով շուրջ 38.4 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ շահութահարկի մուտքերը նվազել են 2.8%-ով կամ 1.1 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է ոչ պետական ձեռնարկությունների, ոչ ռեզիդենտների, ինչպես նաեւ օտարերկրյա ներդրումներով ձեռնարկությունների կողմից վճարված շահութահարկի նվազմամբ: Միեւնույն ժամանակ հարկ է նշել, որ ֆինանսավարկային կազմակերպությունների կողմից վճարված շահութահարկի գծով արձանագրվել է 53% աճ:

2009 թվականի հունվար-մայիս ամիսներին ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 21.3 մլրդ դրամ եկամտահարկ՝ ապահովելով հարկերի ու տուրքերի 11.2%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ եկամտահարկի մուտքերն աճել են 7.9%-ով կամ 1.6 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում մաքսատուրքը կազմել է ավելի քան 9.8 մլրդ դրամ՝ 22.9%-ով կամ 2.9 մլրդ դրամով զիջելով 2008 թվականի նույն ցուցանիշը եւ ապահովելով պետական բյուջեի հարկերի ու տուրքերի 5.2%-ը:

Պետական տուրքի գծով պետական բյուջեի եկամուտները կազմել են շուրջ 6.6 մլրդ դրամ կամ առաջին կիսամյակում ծրագրված մուտքերի 62.2%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական տուրքը նվազել է 19.9%-ով կամ 1.6 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց ելքի, լիցենզավորման եւ պետական գրանցման համար գանձվող տուրքերի նվազմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում գործունեության առանձին տեսակներից գանձված հաստատագրված վճարները կազմել են ավելի քան 8.9 մլրդ դրամ՝ 23.3%-ով կամ 1.7 մլրդ դրամով գերազանցելով 2008 թվականի համապատասխան ցուցանիշը: Աճը հիմնականում պայմանավորված է խաղատների գործունեության կազմակերպման, դրամական շահումով խաղային ավտոմատների շահագործման, տրանսպորտային միջոցների գազալցման, առևտրի իրականացման վայր կազմակերպելու և հանրային սննդի

ոլորտում գործունեության իրականացման համար գանձվող հաստատագրված վճարների աճով:

Պարզեցված հարկից հունվար-մայիս ժամանակահատվածում պետական բյուջե է մուտքագրվել 389.6 մլն դրամ, որը 85.8%-ով զիջել է նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ պայմանավորված 2009 թվականի հունվարի 1-ից «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի գործողության դադարեցմամբ:

2009 թվականի հունվար-մայիս ամիսներին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 1.8 մլրդ դրամ բնօգտագործման և բնապահպանական վճարներ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված մուտքերը նվազել են 45%-ով կամ 1.5 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված օգտակար հանածոների արդյունահանման, այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու և ՀՀ ներմուծվող շրջակա միջավայրի վնասակար ապրանքների համար գանձվող բնապահպանական վճարների նվազմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում այլ հարկերից պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 2.9 մլրդ դրամ: Մասնավորապես՝ 125.1 մլն դրամ է կազմել «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կոնցեսիոն վճարը, 989 մլն դրամ՝ ճանապարհային վճարները, 360.8 մլն դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 608 մլն դրամ՝ հարկային օրենսդրությունը խախտելու համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տույժերն ու տուգանքները և 549.9 մլն դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման ֆոնդի եկամուտները: Նախորդ տարվա համեմատ այլ հարկերը նվազել են 62.6%-ով կամ 4.8 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է 2008 թվականի նույն ժամանակահատվածում «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ռոյալթիի վճարումներով և կոնցեսիոն վճարի նվազմամբ:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով բյուջետային եկամուտները կազմել են ավելի քան 38.7 մլրդ դրամ և կիսամյակային ծրագիրն ապահովել 77.6%-ով: 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պարտադիր սոցիալական ապահովության վճարներն աճել են 3%-ով կամ 1.1 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում ստացվել են շուրջ 2.6 մլրդ դրամի պաշտոնական դրամաշնորհներ և 97.1%-ով ապահովել կիսամյակային ծրագրային ցուցանիշը: Նշված գումարից շուրջ 1.3 մլրդ դրամը ստացվել է Եվրոպական հարևանության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների ֆինանսավորման համար, շուրջ 1.2 մլրդ դրամը՝ Եվրամիության պարենային ծրագրի շրջանակներում, իսկ 138.1 մլն դրամը մուտքագրվել է պետական

հիմնարկների արտաբյուջետային հաշիվներին՝ նրանց կողմից իրականացվող ծրագրերի ֆինանսավորման համար:

Պետական բյուջեի այլ եկամուտները 2009 թվականի հունվար-մայիս ամիսներին կազմել են ավելի քան 14.1 մլրդ դրամ և 89.6%-ով ապահովել կիսամյակային ծրագրային ցուցանիշը: Այլ եկամուտների համեմատաբար բարձր կատարողականը պայմանավորված է նրանով, որ որոշ եկամտատեսակներ, մասնավորապես՝ ռեզիդենտներին պետության տրամադրած վարկերի օգտագործման տոկոսավճարները և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերը, արդեն իսկ գերազանցել են առաջին կիսամյակի ծրագիրը համապատասխանաբար 251.5%-ով և 257.4%-ով: Բացի այդ, ծրագրի համեմատաբար բարձր՝ 97.5% կատարողական է ապահովվել բանկերում իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերի գծով, որոնք կազմել են 2.2 մլրդ դրամ: 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտներն աճել են 38.1%-ով կամ 3.9 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ շարժական կապի գլոբալ համակարգի ծառայությունների մատուցման 3-րդ օպերատորի մրցույթի հաղթողի կողմից կատարված վճարումներով, ռադիոհաճախականության օգտագործման վճարի, ինչպես նաև իրավախախտումների համար կիրառվող պատժամիջոցներից մուտքերի աճով:

2009 թվականի հունվար-մայիս ամիսներին ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվել են 279.2 մլրդ դրամի ծախսեր, որոնցից շուրջ 4.6 մլրդ դրամը՝ պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների հաշվին: Մասնավորապես՝ 262.2 մլրդ դրամ են կազմել ընթացիկ ծախսերը, 17 մլրդ դրամ՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները: 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ բյուջեի ծախսերն ավելացել են 5.3%-ով կամ 13.9 մլրդ դրամով: Աճը պայմանավորված է ընթացիկ ծախսերի, մասնավորապես՝ կենսաթոշակների, ծառայությունների ձեռք բերման, աշխատավարձի, նպաստների եւ համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաների աճով:

Ընթացիկ ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 262.2 մլրդ դրամ՝ 76.9%-ով կատարելով կիսամյակային ծրագիրը: Ընթացիկ ծախսերից 25.1 մլրդ դրամն ուղղվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատավարձերի վճարմանը, 1.8 մլրդ դրամ՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարներին, որոնց առաջին կիսամյակի կատարողականը կազմել է համապատասխանաբար 75.9% եւ 71%: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերն ավելացել են համապատասխանաբար 19.2%-ով եւ 4.5%-ով: Ծառայությունների եւ ապրանքների ձեռք բերմանը պետական

բյուջեից հատկացվել է 53.1 մլրդ դրամ՝ 13.2%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը եւ ապահովելով առաջին կիսամյակի ծրագրի 74.1%-ը: Հաշվետու ժամանակահատվածում ավելի քան 5 մլրդ դրամ հատկացվել է պետական պարտքի սպասարկմանը՝ կազմելով կիսամյակային ծրագրի 73.2%-ը: Մասնավորապես՝ նշված գումարից շուրջ 3.9 մլրդ դրամը տրամադրվել է ներքին, 1.2 մլրդ դրամը՝ արտաքին պարտքի սպասարկմանը: 2008 թվականի առաջին կիսամյակի համեմատ պետական պարտքի սպասարկման ծախսերն աճել են 17.3%-ով կամ 744.8 մլն դրամով, որը պայմանավորված է ներքին պետական պարտքի սպասարկման ծախսերի աճով: Պետական բյուջեից տրամադրված սուբսիդիաների գումարը կազմել է ավելի քան 6.9 մլրդ դրամ, որը 12.4%-ով զիջել է նախորդ տարվա նույն ցուցանիշը եւ ապահովել կիսամյակային ծրագրի 78.2% կատարողական: Հաշվետու ժամանակահատվածի պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 10.6%-ը կամ 27.9 մլրդ դրամ կազմել են դրամաշնորհները, որից 11.5 մլրդ դրամը տրամադրվել է համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաների ֆինանսավորմանը: Դրամաշնորհների կիսամյակային ծրագիրը կատարվել է 72.8%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 37%-ն ուղղվել է սոցիալական նպաստներին եւ կենսաթոշակներին, որոնք կազմել են շուրջ 96.9 մլրդ դրամ կամ կիսամյակային ծրագրի 80.1%-ը: Մասնավորապես՝ 72.6 մլրդ դրամ է տրամադրվել կենսաթոշակներին, 24.3 մլրդ դրամ՝ նպաստներին: 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ կենսաթոշակների գծով բյուջեի ծախսերն աճել են 13.3%-ով, իսկ նպաստներինը՝ 19.2%-ով:

2009 թվականի հունվար-մայիս ամիսներին պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 17 մլրդ դրամ, մասնավորապես 20.9 մլրդ դրամ են կազմել ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը եւ 3.9 մլրդ դրամ՝ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը: 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը նվազել են 24.6%-ով կամ 6.8 մլրդ դրամով, իսկ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը՝ 33.8%-ով կամ 2 մլրդ դրամով:

2009 թվականի թվականի հունվար-մայիս ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեն (առանց արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող վարկային ծրագրերի գծով միջոցների ներհոսքի) կատարվել է շուրջ 34.5 մլրդ դրամ պակասուրդով կամ առաջին կիսամյակի ծրագրի 66.2%-ը: Ընդ որում, ներքին աղբյուրներից ներգրավվել է 50.4 մլրդ դրամ կամ առաջին կիսամյակում նախատեսվածի 70.4%-ը՝ նախորդ տարվա շուրջ 11.5 մլրդ դրամ հավելուրդի դիմաց: Արտաքին աղբյուրների գծով արձանագրվել է ավելի քան

15.9 մլրդ դրամ հավելուրդ կամ առաջին կիսամյակի ծրագրի 81.6%-ը՝ նախորդ տարվա շուրջ 5.5 մլրդ դրամի դիմաց:

Պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրներում 714.7 մլն դրամ են կազմել փոխառու միջոցներից (արժեթղթերից) զուտ մուտքերը: Մասնավորապես՝ 1.4 մլրդ դրամ են կազմել գանձապետական պարտատոմսերի թողարկումից զուտ մուտքերը: Անցած ժամանակահատվածում շարունակվել է նաեւ ՀՀ ներքին շահող փոխառության պարտատոմսերի հետգնման գործընթացը, որը կազմել է 594.8 հազար դրամ: Մուրհակների մարման նպատակով նախատեսված 61.5 մլն դրամի վճարումներն ամբողջությամբ կատարվել են: 607.4 մլն դրամ ուղղվել է «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ից ստացված վարկի մարմանը:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի պակասուրդը ներքին ֆինանսական ակտիվների գծով ֆինանսավորվել է 49.7 մլրդ դրամի չափով՝ կազմելով կիսամյակային ծրագրի 71.9%-ը: Շուրջ 3.8 մլրդ դրամ է կազմել ներքին վարկավորումը, որիվ ավելի քան 3.0 մլրդ դրամը տրամադրվել է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին: Շուրջ 43.7 մլն դրամի վարկեր են տրամադրվել բռնադատված քաղաքացիներին՝ անհատական բնակարանային շինարարություն իրականացնելու նպատակով: 684.0 մլն դրամ բյուջետային վարկեր են հատկացվել «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամին: Ավելի քան 3.8 մլրդ դրամ բյուջե է մուտքագրվել նախկինում տրամադրված վարկերի վերադարձից, որից 3 մլրդ դրամը՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ից: 2009 թվականի հունվար-մայիս ամիսների ընթացքում ավելի քան 49.6 մլրդ դրամով օգտագործվել են ազատ բյուջետային միջոցները՝ կազմելով կիսամյակային ծրագրի 71.5%-ը:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեն պակասուրդի ֆինանսավորման արտաքին աղբյուրներում արձանագրվել է ավելի քան 15.9 մլրդ դրամ հավելուրդ կամ առաջին կիսամյակում նախատեսվածի 81.6%-ը: Մասնավորապես՝ 13.2 մլրդ դրամ միջպետական վարկ է տրամադրվել ԼՂՀ-ին, որը 35.1%-ով գերազանցել է նախորդ տարվա նույն ցուցանիշը: Վրաստանի կողմից միջպետական վարկի գծով կատարվել է 29.5 մլն դրամի վճարում: Այն 2008 թվականի պարտավորությունն է, որը Վրաստանի կողմից վճարվել է սահմանված ժամանակացույցին համապատասխան՝ 2008 թվականի դեկտեմբերին, սակայն միասնական գանձապետական հաշվին մուտքագրվել է 2009 թվականի հունվարին: Միջազգային ֆինանսական կազմակերպություններին ՀՀ անդամակցության գծով պարտավորությունների կատարմանն ուղղվել է 78.9 մլն դրամ: Անցած ժամանակահատվածում արտաքին պարտավորությունների մարմանն ուղղվել է

ավելի քան 2.6 մլրդ դրամ, որից 1.8 մլրդ դրամ հատկացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը, շուրջ 38.8 մլն դրամ՝ Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը, 349.5 մլն դրամ՝ ԱՄՆ ապրանքային վարկերի մարմանը, շուրջ 12.9 մլն դրամ՝ ԱԷԿ-ի վառելիքի չոր պահպանման համակարգի ծրագրի գծով Ֆրանսիայի նկատմամբ պարտքի մարմանը եւ 427.5 մլն դրամ՝ Էլեկտրաէներգիայի հաղորդման եւ բաշխման համակարգի ծրագրի գծով Ճապոնիայի նկատմամբ պարտքի մարմանը: